հայութիւն կայ, մեծ մասամբ բարեկեցիկ, վաճառականներ, բարձրաստիճան պաշտօնեաներ, մտաւորականներ եւ որ վերջին դէպքերը արթնցրել են նրանց մէջ անկեղծ հայրենասիրական զգացում, որ նրանք պատրաստ են անմիջապէս տեղափոխուել Հայաստան, լծուել գործի, շինել նոր եւ դարերից ի վեր երազած մի երկիր: Առայժմ եկել էր ինքը եւ իր միակ զաւակը՝ նախկին ծովային սպայ. մասնակցած է ռազմանաւերի ճակատամարտին եւ թէպէտ վիրաւորուած է, բայց առայժմ ողջ եւ առողջ է եւ որոշել է իր ամբողջ կարողութիւնը ի սպաս դնել հայրենիքին: «Խորհեցինք,— պատմում էր,— ես եւ զաւակս, խորհեցինք երկար թէ ի՞նչ ուղղութիւն բռնենք եւ եկանք այն եզրակացութեան, որ նորից մեր հայրենիքը ամէն բանից լաւ է: Եկա՛նք եւ ի՞նչ ուրախ եմ, որ եկանք: Զաւակս անմիջապէս լծուեց գործի: Հայաստանը դեռ ծով չունի, ուստի զաւակս բարձրացաւ եւ գնաց լիճը փնտռելու: Մեծ լիճ է, կարելի է նաւարկել, բայց նաւ չկայ: Նաւ չկա՛յ...ուստի զաւակս որոշեց նաւ շինել: Զաւակս, պարոն, շատ լաւ տղայ է, քաջ եւ խելացի: Դու, հայրիկ, ասեց, զբաղուիր այստեղ պատգամաւորական գործերով, իսկ ես գնամ նաւը շինեմ: Փող չկայ, տախտակ չկայ, գործիքներ չկան, մի քիչ դժուար է, հասկանում էք. խեղճ տղան ոտքով է գնում գալիս Սեւան: Կօշիկները պատռուել են,ցեխ է, ցուրտ է... Ասում է, ոչինչ, դու, հայրիկ իմ մասին մի մտածիր, ես նաւը պիտի շինեմ»... Եւ այդպէս, միշտ ոգեւորուած, խօսում ու պատմում էր. իր զաւակը, նաւը, Բեսարաբիայի հայերը...

— 1919-ին երկաթէ նաւը կայարանում կանգնած չէր:

— Հա, իսկապէս, երկաթէ նա՛ւը: Ի՞նչ եղաւ:

— Մի օր, եկաւ մի մարդ՝ լայն ուսերով, աշխուժ, կորովի՝ եւ սկսաւ նաւը չափել, յետոյ չափեց այս ճանապարհը, քայլեց, դիտեց ու դռնէ դուռ ընկաւ:

— Դռնէ դո՞ւռ...

— Այո՛: Երբ նա յայտարարեց, որ ուզում է նաւը Սեւան տանել, ամէնքը խնդացին: Երկաթէ նաւը Սեւա՞ն, կիսաքանդ եւ նեղլիկ այս ճանապարհո՞վ: Ընկաւ դռնէ դուռ... Մոռացայ ասել, որ ծովային կապիտան էր, մեր հերոսը:

— Մեր երկրում, նաւարկելու համար լեռ պէտք է բարձրանալ:

— Մեր ծովերը երկնքի մօտ են:

— Եւ սակայն մենք ունեցել ենք յանդուգն նաւավարներ: 16-րդ դարում, Հոլանդայից, հանճարեղ եւ արկածախնդիր հայեր ճեղքել են անյայտ ծովեր, գնացել են Հնդկաստան, Պարսից ծովը, Չինաստան... Մեծ հայ կապիտաններ են եղել Բիւզանդական նաւատորմիղի մէջ, աւելի ուշ տաճկականի մէջ: Ահաւոր մարդիկ, զաղանային բարքերով, խելացի եւ կորովի...

— Ինչպէս Բեսարաբիացի այդ ծովային սպա՞ն...

— Ընդհակառակը: Մի օր ես նրան տեսայ. հօրը հետ մենք նստած էինք բուլվարի նստարաններից մէկի վրայ, երբ նա եկաւ Սեւանից: Երկար, նիհար տղայ էր, սպրդնած դէմքով, մտածկոտ, քիչ խօսող, վերին աստիճանի համեստ: Ծովային սպայի, փայլուն կոճակներով, սեւ վերարկու ունէր եւ գլխարկ. կօշիկները պատռած էին եւ փոշիներով ծածկուած էր: Այդ տղան մտքիս մէջ մնացել է հեռաւոր երազի նման, ինչպէս բանաստեղծական մի նիւթ, որ գալիս այցելում է մեր ներքնաշխարհը եւ երբեք դոյացման ձեւ չի ստանում: Մի քիչ Գեղամ Բարսեղեանին էր նմանում: Եկաւ, նստեց եւ մի խօսք չարտասանեց: Հայերէն չէր իմանում եւ մեր հարցերին պատասխանեց հաղիւ: Աշխատում էր, դժուար է, յոյս ունի, որ մի բան կ'անի... Իսկ հայրը նայում էր նրա վրայ գորովալից աչքերով, հպարտօրէն: «Նիչեվո,— ասում էր,— նիչեվո Միչա (կարծեմ Միչա էր), կը տեսնես լաւ կը լինի»:

Արտասահմանում, թերթերի մէջ կարդացի, որ Սեւանայ լիճի վրայ տեղի է ունեցել «Տիգրան Երկաթ» նաւի օրհնութեան արարողութիւնը, որի վրայ զետեղել են մի թնդանօթ. ճառեր, քէֆ, ուրախութիւն... Ու տեսնում էի, երիտասարդ, կօշիկները պատռուած, դունաթափ սպային լեռնային ծովի մէջ նաւարկող ուրուական այդ ռազմանաւի վրայ, վառուուն իր աչքերով, հպարտ եւ բախտաւոր... Թրքերի դէմ կռուի ժամանակ, հեռա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան